



Ե Ր Կ Շ Ա Բ Ա Թ Ա Թ Ե Ր Թ

ՀՀ Դաշնակցության Արցախի Կենտրոնական Կոմիտեի պաշտոնաթերթ

Մենք համացանցում

www.aparaj.am

Խմբագրական

Հարաբերություններ Սփյուռքի հետ

Հայ ժողովրդի վերջին 25-30 տարվա պատմության մեջ առանցքային դեր է ունեցել Արցախյան ազգային-ազատագրական պայքարը: Վերջին 100 տարիների ընթացքում հայ ժողովրդի պահանջատիրական պայքարում Արցախյան հարցի անկախության հարցը առաջնություն է, որը սնուցում է ազգային, քաղաքական միտքը:

Հայաստանի Հանրապետության անկախացումը, թերևս ավելի մեծ ձեռքբերում կարելի է համարել, սակայն՝ ոչ հարթաճանաչ, քանի որ այն ինչ-որ տեղ, ինչպես 1918-ի անկախությունը, անխուսափելի էր, «պարտադրված»:

Հայկական պետական մտածողության տեսակետից Արցախի պայքարի շուրջ ձևավորված գաղափարները քաղաքական շարժիչ ուժ են եղել և են: Առ այդ՝ պատահական չէ, որ «Ղարաբաղ» կոմիտեն ստանձնեց Հայաստանի և Արցախի հանրապետության իշխանությունը, իսկ Հայաստանի Հանրապետության հաջորդ 2 նախագահները եղան Արցախյան պատերազմի ժամանակ ղեկավար դեմքեր:

Արցախը նույնանման հեղինակություն է վայելում նաև Սփյուռքում: Դրա վառ ապացույցը Արցախի յուրօրինակ դերն է Հայաստան-Արցախ-Սփյուռք եռամիասնության գաղափարի իրականացման առումով: Այս դերը շատ անգամ է դրսևորվել, երբ Սփյուռքը որևէ պատճառով անհաշտ կեցվածք է ցուցաբերել ՀՀ-ի որդեգրած քաղաքականությանը: Հիշենք Հայաստանի Հանրապետությունում ՀՀ-ի գործունեության կասեցման և հայ-թուրքական ֆուտբոլային դիվանագիտության ժամանակահատվածները:

Սփյուռքի հետ հարաբերություններում ընդհանրապես պետք է նկատի ունենալ, որ ՀՀ-ի և Արցախի կողմից մինչ այժմ չի հաջողվել լիարժեք օգտվել Սփյուռքի ներուժից: Չնայած ՀՀ-ում առանձին նախարարություն չառկում է Սփյուռքի հարցերով, սակայն, ինչպես վերը նշվեց, Արցախի հեղինակություն, անշուշտ ավելի արդյունքներ կարող է ապահովել:

ՀՀ-ի կողմից Արցախի ներգրավումը Սփյուռքի հետ հարաբերություններում հաճախ տեղի է ունենում հարկ եղած հեղինակությունն ու լեգիտիմությունն ապահովելու համար: Իսկ մյուս կողմից՝ Սփյուռքը Արցախին օգտագործում է, որպեսզի ապահովի իր վարկը և հեղինակությունը ձեռք բերի հայկական այլ շրջանակների հետ հարաբերություններում: Իհարկե, Արցախի պետական համակարգն ու իշխանությունները, և հատկապես ժողովուրդը կարողացել են վստահել վստահելի և ազնիվ լինելու հանգամանքը, սակայն դա բավարար չէ: Պետք է դերակատարություն ստանձնել և որոշումներ կայացնելու մեջ ունենալ լիարժեք խոսքի իրավունք:

Արցախի կողմից Սփյուռքի առկա ներուժը լիարժեք օգտագործելու համար պետք է մշակվի պետական հայեցակարգ: Արցախը և Արցախի իշխանությունները, ելնելով արյան գնով վաստակված հեղինակությունից, պետք է վեր կանգնեն ճշմարիտ հաշվարկներից: Իսկ առօրեական քաղաքական հաշվարկներն ու հեղինակությունն այլոց հարաբերություններին ծառայեցնելը չի կարող հարկ եղածն ապահովել:

Հայաստան-Արցախ-Սփյուռք եռամիասնության գաղափարն իրական է, ու գործնական արդյունքները կարող են առավել շոշափելի լինել միայն այն պարագայում, եթե ազնիվ ու անաչառ մտեցումների ու փոխհասկացողությունների վրա հիմնված լինեն: Հեղինակությունների, հնարավորությունների անտեղի փոշիացումը այլ տեղ չի տանելու մեզ, քան ձեռնարկությունների գիրկը և անվստահության առկա մթնոլորտի խորացում:

Բավականին լուրջ և տարողունակ հարց է Սփյուռքի հետ հարաբերությունների մշակումը, իսկ Արցախը, որպես հայկական քաղաքական մտքի առաջատար, պետք է իր ասելիքն ունենա այդ ասպարեզում:



Մինսկի խմբի համանախագահների այցը տարածաշրջան

Հոկտեմբերի 22-26-ը Մինսկի խմբի համանախագահներն այցելեցին տարածաշրջան:

Հոկտեմբերի 23-ին համանախագահներն այցելել էին Ադրբեջան, հանդիպել Իլհամ Ալիևի հետ:

Հոկտեմբերի 24-ին Արցախի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանն ընդունել է ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներին: Հանդիպմանը քննարկվել են Ադրբեջան-Ղարաբաղյան հակամարտության կարգավորմանը և վերջին գարգացումներին առնչվող հարցերը: Նախագահ Բ. Սահակյանը նշել է, որ Ադրբեջանը շարունակում է հավատարիմ մնալ իր ապակառուցողական դիրքորոշմանը՝ խախտելով զինադադարի ռեժիմը, չիրաժարվելով հայտնյա քաղաքականությունից:

Երկրի ղեկավարը կարելի է գիտադարձի պահպանմանն ու խախտումների վերահսկմանն ուղղված մեխանիզմների մշակման անհրաժեշտությունը:

ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները, ի պատասխան Ադրբեջանական զինուժի կողմից օրերս ձեռնարկված դիվերսիոն գործողությանը


և շփման գծում տարբեր զինատեսակներից կատարվող խախտումների վերաբերյալ մեկնաբանությանը, նշել են, որ Պաշտպանության նախարարի հետ հանդիպման ժամանակ այդ հարցերը քննարկվել են և հետ:

Խոսելով շփման գծում ԵԱՀԿ դիտորդների թվի ավելացման մասին՝ Իգոր Պոպովը նշել է, որ հարցն այս պահին դեռևս մշակվում է: Անդրադառնալով հոկտեմբերի 14-ին Երևանում Ռուսաստանի Դաշնության արտաքին գործերի նախարար Սերգեյ Լավրովի այն հայտարարությանը, որ Ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործում Թուրքիան կարող է դրական դեր ունենալ, Պոպովը մասնավորապես նշել է. «Կարծում եմ՝ Լավրովը նկատի է ունեցել 2009-ին Հայաստանի և Թուրքիայի միջև կնքված արձանագրությունները, որոնք վավերացման են փակ սահմանների վերաբերյալ արդյունքում կարող են դրական ազդեցություն ունենալ Ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման գործում»:

Համանախագահներ Իգոր Պոպովին (Ռուսաստան), Ջեյմս Ուորլի-

քին (ԱՄՆ), Պիեռ Անդրոյին (Ֆրանսիա) հոկտեմբերի 25-ին ընդունել է ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը: Հանդիպմանն անդրադարձ է կատարվել Ղարաբաղյան հիմնախնդրի խաղաղ կարգավորմանն առնչվող մի շարք հարցերի: Հանդիպմանը հնչեցվել է, որ Ադրբեջանն արդեն մի քանի ամիս է՝ մերժում է իրականացնել Վիեննայի և Սանկտ Պետերբուրգի գազաթափողվերին նախագահների մակարդակով ձեռք բերված պայմանավորվածությունները՝ դրանով խոչընդոտելով բանակցային գործընթացի առաջ մղման նպատակով համապատասխան պայմանների ստեղծմանը: Հանդիպումներին ՀՀ ԱԳ նախարար Էդուարդ Նալբանդյանը նշել է, որ հակառակ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրների բազմաթիվ կոչերի՝ գերծ մնալ առավելապաշտական և սադրիչ հռետորաբանությունից և գործողություններից, Բաքուն շարունակում է այդ գործելանոցը, ինչի թարմ ապացույցն են վերջին օրերին բանակցային գործընթացի ելությունն և ոգին խեղաթյուրող՝ Ադրբեջանի ղեկավարության կողմից հնչեցվող հայտարարությունները:

ՄԱՅԱԶԴ



ՀՀ Դաշնակցության Բյուրոն խոր վշտով տեղեկացնում է, որ կարճատև հիվանդությունից հետո, Հոկտեմբերի 27-ին, վախճանվեց վաստակաշատ ընկեր, ՀՀ Բյուրոյի նախկին անդամ, «Դրօշակ» պաշտոնաթերթի նախկին գլխավոր խմբագիր, գրող-հրապարակախոս՝

ընկեր Ռուբեն Գեորգիի Հովսեփյանը

ՀՀ Դաշնակցության մեծ ընտանիքի անունից մեր վշտակցությունն ենք հայտնում ընկ. Ռուբեն Հովսեփյանի հարազատներին, մտերիմներին ու ընկերներին:

ՀՀ Դաշնակցության Բյուրո

ԼՂՀ ԱԺ «Դաշնակցություն» խմբակցության հանդիպումները բնակչության հետ

Խմբակցության ԱԺ պատգամավորները, իրենց խոստումների համաձայն հանդիպումներ են կազմակերպում շրջաններում՝ մոտիկից ծանոթանալու ազգաբնակչությանը հուզող հիմնահարցերին: Պատգամավորներ Դավիթ Իշխանյանը, Վահրամ Բալայանը, Ալյոշա Գաբրիելյանը, Ռիտա Մնացականյանը, Լեռնիկ Յուզիանյանը, Արմեն Սարգսյանը հանդիպումներ ունեցան Մարտու-

նու շրջանի Կաղարծի, Պառավաթումբ, Զացի, Վազգենաշեն, Ավդուռ, Ասկերանի շրջանի Սղնախ, Մարտակերտի շրջանի Վարդաձոր եւ Զանկաթաղ, ինչպես նաեւ Մարտունու շրջանի Մուշկապատ եւ Զաղորտի համայնքների բնակիչների հետ: Զանդիպումների ընթացքում «Դաշնակցություն» խմբակցության պատգամավորները հաշվետվություններ են ներկայացրել խմբակցության 1,5 տարվա

գործունեության, խորհրդարանում ներկայացված օրինագծերի առաջարկների մասին: Զանդիպումների եզրափակիչ մասում պատգամավորները լսել են ազգաբնակչության հնչեցրած հարցերը, որոնք հիմնականում առնչվում էին սոցիալական ոլորտներին, մասնավորապես՝ բնակչության բնակարանային հարցերին, աշխատանքի տեղավորման, էլեկտրաէ-

ներգիայի, գազի, ինտերնետ կապի մատակարարումների խաթարումներին, մանկապարտեզների եւ դպրոցաշինության հարցերին: Պատգամավորները նշեցին, որ հետամուտ են լինելու՝ բարձրացված հարցերն ուղղելու համապատասխան նախարարություններ:

«Ապառաժ»

Խաչքար-հուշարձան՝ ի հիշատակ Սիսիանի ջոկատի զոհված ազատամարտիկների



Ապրիլյան քառօրյա պատերազմում Սիսիանի ջոկատի զոհված ազատամարտիկների հիշատակին՝ հոկտեմբերի 29-ին Մարտակերտի շրջանի Թալիշ համայնքում տեղի է ունեցել խաչքար-հուշարձանի բացման հանդիսավոր արարողություն: Խաչքար-հուշարձանը կանգնեցվել է Սիսիանի ջոկատի հրամանատար Աշոտ Մինասյանի նախաձեռնությամբ: Թեեւ գյուղում, անվտանգության նկատառումներից ելնելով, բնակիչները մշտական բնակություն չունեն, սակայն միջոցառման առիթով բազմաթիվ մարդիկ էին հավաքվել: Եկել էին նաեւ ապրիլյան քառօրյա պատերազմում զոհված՝ Սիսիանի ջոկատի ազատամարտիկների հարազատները՝ հարգելու հայրենիքի համար իրենց կյանքը զոհաբերած հայրողիների հիշատակը: Բացման հանդիսավոր արարողությամբ

նր մասնակցում էր նաեւ Արցախի Զանդապետության նախագահ Բակո Սահակյանը, ով իր խոսքում նշեց, որ այս պահին բոլորս համակված ենք տարբեր զգացումներով: Մի կողմից՝ կա խոր թախիծ եւ տխրություն, քանի որ հիշում ենք մեր նահատակված ընկերներին եւ հարազատներին, որոնց կերպարը միշտ կենդանի է մեր սրտերում, իսկ մյուս կողմից՝ մենք լի ենք հպարտությամբ, որ ունենք այդպիսի հերոս մարտիկներ, ովքեր իրենց խիզախությամբ ու անձկիրությամբ պաշտպանեցին հարազատ ժողովրդին, ում համար հայրենիքին ծառայելն ամենամեծ եւ կարեւոր առաքելությունն էր կյանքում: Զուշաքարի բացման առթիվ հանդիսավոր տողանով անցել է ՊԲ պատվո պահակախումբը, իսկ մի խումբ ազատամարտիկներ պարգևատրվել են պաշտպանության նախարարության շնորհակալագրե-

րով ու ձեռքի ժամացույցներով: Խաչքար-հուշարձանի հեղինակ Վարազդատ Զամբարձումյանը նշել է, որ հուշարձանի վրա պատկերված թուր-խաչքարը խորհրդանշում է սիսիանցի ազատամարտիկներին: «Խաչքար, ինչպես գիտենք, քրիստոնեության խորհրդանշան է համարվում: Սակայն երբ հայրենիքը վտանգի մեջ է, մեր խաչքար պետք է թուր դառնա, որպեսզի կարողանանք պաշտպանել մեր հավատքն ու հայրենիքը»,- ասել է վարպետը եւ ավելացրել, որ Թալիշի կենտրոնում տեղադրելու զարգացումը եւս խորհուրդ ունի: Ըստ հեղինակի՝ հուշարձանը կանգնեցվել է այն մեծ ցանկությամբ, որ հաջորդ հուշարձանը կլինի գյուղի վերածնունդը ու բնակիչների վերադարձը խորհրդանշող «կենսա ծառը»:

ՍԵՒ. ԼՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Եռամիասնության մի ոտը կաղ է...

Հայաստանի եւ Արցախի Զանդապետության հիմնադրման 25-ամյակի կապակցությամբ հոկտեմբերի 20-ին Երեւանում մեկնարկված՝ Լրագրողների 8-րդ համահայկական համաժողովի մասին Արցախի լրագրողները տեղյակ չէին եւ չեն մասնակցել: Արցախի լրագրողները մասնակցել են միայն համաժողովի արցախյան օրերին, այն էլ՝ «հրավիրված էին» ոչ թե համաժողովի կազմակերպիչների կամ Արցախի ժուռնալիստների միության նախագահի կողմից, այլ «Արցախպրես» անկախ լրատվական գործակալության առանձնահատուկ արտոնություններ վայելող տնօրեն Վահրամ Պողոսյանի կողմից: Ստեփանակերտում համաժողովի աշխատանքները շարունակելն Արցախի ժուռնալիստների միության նախագահ Կիմ Գաբրիելյանի առաջարկն էր: Նա հանդիսանում է նաեւ լրագրողների համահայկական համաժողովի համակարգող խորհրդի անդամ: Սակայն, այն հարցին, թե ինչու՞ Արցախի լրագրողները չեն մասնակցել համաժողովի Երեւանյան օրերին, Կիմ Գաբրիելյանը դժվարացավ պատասխանել: «Դա մեր խնդիրը չէ, դա տվյալ լրատվամիջոցի խնդիրն է: Ես իրավասու չեմ նման հարցի պատասխանել: Իմ պատասխանատվության դաշտն այստեղ բոլորովին այլ է եղել՝ հանձնարարությունն ունեցելովս նրանց կազմակերպել եւ լուծել շենքային խնդիրը, այսինքն՝ միայն կազմակերպչական մասը: Հայաստանում տեղի ունեցածի մասին իրենց հարցրեք: Ես բոլորովին կապ չունեմ», - մեզ հետ զրույցում նշել է Կիմ Գաբրիելյանը: Մենք չբավարարվեցինք Կիմ Գաբրիելյանի պատասխանից: Դիմեցինք համաժողովի գլխավոր կազմակերպիչ, Սփյուռքի նախարար Զրանուշ Զակոբյանին, ով, ի գարմանս մեզ, հերքեց Կիմ Գաբրիելյանի անկարողությունը հարցին պատասխանելու վերաբերյալ, եւ նշեց, որ Կիմ Գաբրիելյանը տեղյակ էր, եւ ինքը պետք է կազմա-

կերպեր Արցախի լրագրողների մասնակցությունը համաժողովի Երեւանյան օրերին: «Կիմ Գաբրիելյանը պետք է ուղարկել՝ ում ուզում էր: Բայց, քանի որ գալիս էինք այստեղ, ավելի նպատակահարմար գտանք, որ Արցախի լրագրողները երկու օր չկորցնեն գալ-գնալու վրա», - նշել է Զրանուշ Զակոբյանը: Աշխարհի 31 երկրներից ժամանած 200 լրագրողները երեւի երկու օրից ավել են կորցնում համաժողովին մասնակցելով: Հայ լրագրողների համաժողովները համակարգող խորհրդի նախագահ Շահան Գանտահարյանը Արցախի լրագրողների չմասնակցելը Երեւանյան օրերին պայմանավորում է երանով, որ ժողովը մի տեղում չի կազմակերպվել: Սակայն տեղին է մեջբերել Արցախի լրագրող Բելլա Լալայանի ֆեյսբուքյան էջի գրառումը /առանց փոփոխությունների/: «Իմ գործընկերները Սփյուռքից լավ են հիշում 2010 թվականին Ստեփանակերտում անցկացված համաժողովը: Հիշում է նաեւ Սփյուռքի նախարարը, թե ինչ ցատուով են ընդվզել, որ Արցախի սրտում հավաքված մեր գործընկերները խոսում են Արցախի մասին, իսկ Արցախից ոչ մի լրագրողի զեկույց ընդգրկված չի համաժողովի աշխատանքներում /այս անգամ էլ վերիջեցինք այդ օրը ու սրտանց ծիծաղեցինք, թե ինչպես խաղաղ ու շերմ դահլիճում հանկարծ ճարձատեց կայկածը) /համաձայնեցին բոլորը, որ դիտողությունը ճիշտ է. հարցը շտկվեց: 2010-ից հետո Սփյուռքի նախարարությունը, ի դեմս Զրանուշ Զակոբյանի, որը համահայկական համաժողովների բոլոր աշխատանքներին մասնակից է անում Արցախի ժուռնալիստների միության նախագահին, որպեսզի նա իր հերթին տեղյակ պահի լրագրողներին, իսկ ժուռնալիստների միության նախագահը հավանաբար որոշում է, որ Արցախում լրագրողներ չկան /բացի իր մտերիմ մի քանի լրագրողից/:» Զևայած Սփյուռքի նախարարի այն հա-

վաստիացմանը, որ որեւէ խտրականություն չի դրվում լրատվամիջոցների միջեւ, եւ Արցախի մասնակցությունը նախարարության բոլոր ծրագրերում պարտադիր պայման է, «Ապառաժ»-ի խմբագրությունը երբեւէ համաժողովին մասնակցելու որեւէ պաշտոնական հրավեր չի ստացել: Համաժողովի արցախյան օրերը մի շարք բացահայտումներ են արեցին: Պարզվում է՝ մի քանի տարի է, ինչ Սփյուռքի նախարարությանն ամբողջ գործում է համակարգող խորհուրդ: Եռամսյակը մեկ հեռակապի միջոցով գումարվում են նիստեր տարբեր տարածաշրջաններում գործող հայկական ամենանշանավոր լրատվամիջոցների ղեկավարների մասնակցությամբ: «Ազդակ» օրաթերթի տնօրեն-գլխավոր խմբագիր, հայ լրագրողների համաժողովները համակարգող խորհրդի նախագահ Շահան Գանտահարյանի խոսքով՝ դա մի յուրահատուկ ձեւաչափ է տարբեր տարածաշրջանում գործող հայկական լրատվամիջոցների խնդիրները եւ հարցերը համապարփակ քննարկելու (բացի համահայկական խորհրդաժողովի կազմակերպչական հարցերը քննարկելուց): Համակարգող խորհրդի նիստերին է մասնակցում նաեւ Արցախի ժուռնալիստների միության նախագահ Կիմ Գաբրիելյանը: Սա Արցախի լրագրողներին համար ուրախալի նորություն էր: Սակայն ստացվում է, որ Կիմ Գաբրիելյանը ժամեր է վատնում նիստերին մասնակցելով: Հետաքրքիր է նաեւ, թե ի՞նչ խնդիրներ է բարձրացնում ժուռնալիստների միության նախագահն առանց Արցախի լրագրողների հետ քննարկելու: Մեզ համար բացահայտում էր նաեւ, որ հերթական համահայկական համաժողովներից մեկում որոշվել էր ստեղծել երիտասարդ լրագրողների ամառային դպրոց: Մի քանի տարի է, ինչ Հայաստանի եւ Սփյուռքի 20-30 լրագրող վերապատրաստում են անցնում այդ դպրոցում: Արցախի ավագ լրագրողները նման դպրոցի գոյության մասին չգիտեն, իսկ երիտասարդները

հույս ունեն հաջորդ տարի երկու օր վատնել Երեւան հասնելու համար եւ մասնակցել վերապատրաստման դպրոցին: Սփյուռքի նախարարության կողմից կազմակերպված միջոցառումները հաճախ մեկնաբանվում են որպես շոտ: Երեւի լրագրողների 8-րդ համահայկական համաժողովն այդ շարքից էր: Համաժողովն ամպագորգոռ լոգուններով էր ուղեկցվում, որոնցից ամենահայտնին «Հայաստան-Արցախ-Սփյուռք եռամիասնությունն է»: Ինչպես բառից կարելի է կռահել՝ Հայաստան-Արցախ-Սփյուռքը նման է եռոտանու: Իսկ երբ եռոտանու մի ոտը կաղ է...

«ԱՊՈՍՏՈՍ»


Հրապարակված հերքում են ինձ վերաբերյալ «արտոնության» մասին տեղեկությունը. Վահրամ Պողոսյան

«Արցախպրես» անկախ լրատվական գործակալության տնօրեն Վահրամ Պողոսյանն իր ֆեյսբուքյան էջում հանդես է եկել հրապարակված հերքումով, որը հրապարակում ենք:

«Ապառաժ» կայքում լույս տեսած այս հոդվածում իմ անվան շահարկումը որեւէ կապ չունի իրականության հետ: Հրապարակված հերքումն էլ լրագրողների 8-րդ համահայկական համաժողովի կազմակերպման գործում կայքի կողմից ինձ վերաբերյալ «արտոնության» մասին տեղեկությունը, իսկ համաժողովի արցախյան օրերին տեղի իմ գործընկերները մասնակցել են ոչ թե իմ, այլ Արցախի ժուռնալիստների միության հրավերով:

Եթե որեւէ մեկին տեղեկացրել եմ այդ մասին, այդ թվում «Ապառաժ»-ի իմ գործընկերներին, ապա սեփական նախաձեռնությամբ: Իսկ առանց հարցումի եւ ճշգրտման մարդու մասին սխալ տեղեկություն տարածելը, կարծում եմ, հարիր չէ իրեն հարգող լրատվամիջոցին եւ հուսով եմ՝ գրառմանս գոնե հերքման հատվածը տեղ կգտնի «Ապառաժ»-ի էլեկտրոնային տարբերակում»:

«Պարմուզան» Էդուարդ Ավագիմյանը



րարում էին, անում էի: Կուսակցության գեներերի պատասխանատվությունը նույնպես իր «ուսերին էր»:

«Չենքերի պահեստն իմ տան նկուղն էր: Երկու ամիս շարունակ հսկել էմ: Հիշում եմ՝ մարտ ամիսն էր, ձյունը չէր հասցրել հալել, սակայն հոգնածությունը կախվել էր կոպերիս: Գիշերները շորերս հանում ու սառը ավտոմատը դնում էի ոտքերիս, որ աչքս չկպներ, - պատմում է Էդուարդ Ավագիմյանը եւ ձեռքերը տաքացնում շնչով: Իրականում, սակայն, փոքրիկ սենյակի ջերմությունն անտանելի էր անգամ բաց դռան պարագայում: - Աղբբեջանցիներն անգամ չունին այդ գեներերից: Ամեն տեսակի գեներ կար. 98 հոգու կարելի էր գինել: Ո՞նց կարող էի քնել»:

Չենքերից գատ՝ հսկում էր նաեւ տան շեմից ծայր առնող անտառը: Ապրիլյան պատերազմի ժամանակ նույնպես իր ներդրումն է ունեցել: Մինչ օրս անտառներից փայտ է ուղարկում առաջնագծի զինվորների համար, որ չմրսեն:

Ծածանվող դրոշմ, 3.5-4 մետրանոց սենյակն ու տան մեծ ու փոքր «բնակիչները»

Այգեստանի քարքարոտ ճանապարհը տանում է գյուղի ամենավերելի տունը: «Պարմուզան»-ի տունը գտնելը դժվար է: Անգամ հարցնելու կարիք չկա: Հեռվում ծածանվող կարմիր դրոշմ ուղեկիչ է: Կուսակցական ընկերներն ասում են, որ նա միակ դաշնակցականն է, ում տան գլխին Դաշնակցության դրոշմ է ծածանվում: Էդուարդ պապիկը ափսոսանքով է նշում, որ համապատասխան մարմինները չեն թույլատրում Արցախի պետական դրոշմ բարձրացնել տան գլխին: Ուզում է երկու դրոշմներն իրար կողքի տեսնել:

Տան բակ հասնելուն պես ճամփորդին դիմավորում են Էդուարդ պապիկի 5 շները: Տունն առջեւից երկհարկանի է, հետեւից՝ միհարկանի: «Տանիքը» դրսից ռուսատառ «М»-ի նման է, սակայն

Դաշնակցության զինանշանով բաճկոն հագած մարդու նկարը շատերը հանդիպած կլինեն սոցիալական ցանցերում: Դարաբաղի Այգեստան համայնք մտնողներն էլ հավանաբար նկատած կլինեն գյուղի զվիսին ծածանվող՝ Դաշնակցության կարմիր դրոշմը: Սակայն քչերը գիտեն զինանշանով բաճկոն կրող եւ դրոշի «տեր»՝ այգեստանցի Էդուարդ Ավագիմյանի, նույն «Պարմուզան» մականունը վաստակած մարդու պատմությունը:

Այգեստանի, Ուկրաինայի եւ Տուևրայի խաչմերուկում...

1951 թ. ծնված Էդուարդ Ավագիմյանը Կիրգիզստանում բանակն ավարտելուն պես վերադառնում է հայրենի գյուղ՝ Այգեստան: Սակայն, կարճ ժամանակ անց ստիպված է լինում արտագնա աշխատանքի մեկնել Միջին Ասիա, այնտեղից էլ՝ Ուկրաինա: Պատրաստվում էր ուղեորվել Տուևրայ, երբ թերթերից մեկում կարդաց Դարաբաղյան պատերազմի սկսվելու լուրը: Մտածելու կարիք չկար:



Մի քանի օր անց Դարաբաղում էր: «Դա իմ պատերազմն էր: Տուևրայն հեջ: Մեր երկիրն էլ մյուս երկրների նման ազատ պիտի լինի: Այս հողի վրա միշտ մայրենի լեզվով պետք է խոսեն», - շեշտում է Էդուարդ Ավագիմյանը:

Պատերազմն ու «Պարմուզան»-ը

1988-ից Դարաբաղում էր, 1990-ականներից՝ «Դաշնակցություն» կուսակցության շարքերում: Չբաղվել է հետախուզությամբ եւ զենք մատակարարելով: Ասում է՝ չեմ կռվել, սակայն ինչ հանձնա-

առանց տանիքի: Չնչին աշխատավարձով 5 տարի առաջ կարողացել է քիչ թե շատ թիթեղով ծածկել տան միայն մեկ սենյակի առաստաղը:

Տուն մտնելուց հյուրընկալության պարտականություն են անում նույն թվաքանակով կատուներն ու ձագերը: Առաստաղից կախված էլեկտրական լամպը գրեթե չի լուսավորում 3.5-4 մետրանոց սենյակը: Օգնության է հասնում փայտե վառարանի մաշված պատերից թափանցող տաքուկ լույսը: Տարիների

ընթացքում վառարանի ծուխը սեւ գույնով ներկել է տան պատերը: Տեղ-տեղ պատերին կանաչավուն երանգ են տվել պատերին աճած խոտերը:

1990-ականներին տունը վերանորոգելու հնարավորություն ուներ, սակայն, առաջնայինը դա չէր համարում. «Ինձ հարց էի տալիս՝ տուն կառուցե՞նք է կարելու գործ, թե՞ բանակ ստեղծելը: Եթե բանակ ստեղծենք, պետություն ստեղծենք, մի՞թե պետությունն ինձ համար տուն չի կառուցի», - մտածում էր Էդուարդ պապիկը, ու այդպես էլ մինչ օրս մնացել է առանց տանիքի...

Սակայն տան առավելություններն, ըստ նրա, գերակշռում են. «Սա ամենագեղեցիկ տունն է: Բոլոր հարմարու-

քը երեխաներին մեծացնելուց, ամուսնացնելուց հետո վերադառնում է Այգեստան:

Ինչ վերաբերում է «Պարմուզան»-ին, ապա նա, երկար տարիներ թափառելով Ռուսաստաններում, հասցնում է յոթ անգամ ամուսնանալ: Բոլոր ամուսնություններն էլ անհաջող էին: Միայնակ կյանքին հարմարվելու պատրաստակամությունն էր ստանձնել, երբ մի օր անտառում Սուսանայի հորեղբայրը բարեւի փոխարեն նրան դիմավորեց «Մի րաժծո՞ եկալա» նախադասությամբ...

13 տարի է՝ ինչ Էդուարդն ու Սուսանան միասին են ապրում:

Կոչումը՝ անտառապահ
Էդուարդ Ավագիմյանի տունն աշխա-



թյունները կան: Այստեղով անցնում է ջրագիծը: Տունը վերանորոգելուց՝ կոյուղու խնդիր չի լինի: Ձորը մոտ է, - ասում է Էդուարդ Ավագիմյանը եւ շարունակում թվարկել տան աշխարհագրական դիրքի առավելությունները, - ամեն առավոտյան մարգանք անելով իջնում եմ գետը՝ լվացվելու: Մաքուր օդ եմ շնչում եւ հաճույք ստանում՝ նայելով այս անտառներին»:

«Այս պայմաններում ապրեմ, բայց լինի ազատ, անկախ, միացյալ Հայաստան», - ավելացնում է Էդուարդ Ավագիմյանը:

Առաջին սերն ու 8-րդ կինը

Տան փոքրիկ հյուրասենյակ մտնելուն պես՝ աչքի է ընկնում պատերից մեկին ռուսերեն գրված «Сучанна» անունը:

- Ո՞վ է գրել այս անունը, - հարցնում է Էդուարդ պապիկին:

- Ես եմ գրել, - ասում է եւ իջեցնում պատից կախված հայելին: Նույն ձեռագրով «Мая дорoga!» բառակապակցությունն է գրված: Ժպտում է, - տառախալով եմ գրել, օ-ի փոխարեն a-եմ գրել:

- Ո՞վ է Սուսանան:

- Առաջին սերն ու 8-րդ կինս, - հպարտությամբ ասում է նա:

Սուսանա Պետրոսյանը Լենինականում էր ապրում: Ամռանն այցելում էր Այգեստանում ապրող տատիկին ու պապիկին: Առաջին անգամ պատանի տարիքում է հանդիպել Էդուարդին: Սակայն, ինչպես ինքն է ասում, առաջին հայացքից սիրահարվելն ուրիշ է: Տարբերվող է նաեւ նրանց սիրո պատմությունը:

Մոր մահից հետո Սուսանան ընդունվում է Գորիսի համալսարան, սակայն, ուսումը դեռ չավարտած, նրան փախցնում են: Հետագայում ամուսինը թողնում եւ մեկնում է Ռուսաստան, իսկ ին-

տատեղից բաժանում է ձգվող ձորը: Ձորն անցնում է եւ արդեն աշխատանքի է: Հեկտարներով ձգվող անտառները Արցախյան պատերազմի ժամանակ հսկում էր աղբբեջանցիներից: Այսօր էլ ասում է՝ «Ես գիդումում հուր անայում պաշտպանում ես վեղերը: Ափսոս չի՞ ես վեղերը յանի...»:

Չնայած թոշակի է անցել, սակայն արժանի փոխարինող չունեցավ:

«Իմ կյանքն ավելի շատ անց էմ կացրել անտառներում, քան տանը: Թե կռվի տարիներին, թե խաղաղության՝ ես անտառում էի, այդ պատճառով ինձ «Պարմուզան» են ասում: Դե ես էլ աշխատում եմ իմ մականունին արժանի լինեմ եւ ամեն օր հաստատում եմ դա», - ասում է նա եւ հազում 1991-ին լիբանանահայերի նվիրած՝ Դաշնակցության զինանշանով հայտնի բաճկոնը:

«Ա մեհենգվա զամոկնեն եսքան գործ կանի՞ն, տես հինգ զամոկնեյա է», - ասում է նա, այնուհետեւ հազում սենյակի անկյունում դրված կոկիկ զինվորական կոշիկները, որոնք սկսել է կրել բաճկոնն ստանալու տարուց: «Քաղաք քինալուց, վեր վննամանում կենում, կարում չում շոռ կյամ. գիդումում թա վեդում ընգըլան», - ասում է նա եւ ճանապարհվում: Գործից ուշանալ չի կարելի: Անտառը սպասում է իր «Պարմուզան»-ին...

Հ.Գ. ՀՅԴ Արցախի ԿԿ-ն պատրաստվում է մեկ տարվա ընթացքում վերանորոգել կուսակցական ընկերոջ տունը: Իսկ Էդուարդ Ավագիմյանն էլ խոստանում է տունը վերանորոգելուն պես իր բակում հյուրասիրություն կազմակերպել: Ինչպես ինքն է ասում՝ մեր մամուլեն ժողովուրդին էլա ըլալան...:

Լուսինե ԹԵՎՈՍՅԱՆ

Նուներ Ռուբեն Յովսեփյան

Յովսեփյանի 27-ին կարճատև հիվանդությունից հետո վախճանվեց ՀՀ-ի Բյուրոյի նախկին անդամ, «Դրոշակ» պաշտոնաթերթի նախկին գլխավոր խմբագիր, գրող-հրապարակախոս, թարգմանիչ Ռուբեն Յովսեփյանը: Թարգմանել է Լեո Տոլստոյի ստեղծագործություններից, Գ. Գ. Մարկեսի «Չարյուր տարվա մենությունը»: Ստորել Ձեզ ենք ներկայացնում գրողի «Նուներ» ստեղծագործությունը:

Պապս երանության մեջ էր. ծերության թռչանքն աչքը ճապացնելու նման ծախսել էր շուկայում՝ մի կիլո թուրան էր գնել, մի ձեռք ներքևաշոր, մի թալ պանիր, հաց, օդի էր խմել, և հիմա այդ օդին նրան օրորում էր: Ծոճռան թախտին ստատ, նա ծուլ-ծուլ քանդում էր շավարի կոճակները, կոշիկների ամրակապերը և քթի տակ դնում էր մի երգ, որը ոչ տխուր էր, ոչ էլ ուրախ: Դա էլ տխուր, և ուրախ երգ էր՝ խնամքով պահված մի հուշ կինոյական Թիֆլիսից, որտեղ պապս ծախսել էր ջահելությունը ճիշտ այնպես, ինչպես, ահա, ծերության թռչանքն էր ծախսել մեր կիսաքաղաքի շուկայում:

- Մի երգիր, պապ,- ճչացի ես:
- Ինչո՞ւ, այ շան ծիծ կերած:
- Մի երգիր,- ասացի,- լացս գալիս է:

Լացս գալիս էր ոչ այն պատճառով, որ երգը լացացնող էր, չէ, դա ոչ տխուր, ոչ էլ ուրախ, դա էլ տխուր, է՛լ ուրախ, սովորական մի երգ էր, որ կինոները երգում էին խնամքով ծախելիս՝ «դուլի յաբլուկի, դուլի յաբլուկի...»: Լացս գալիս էր, որովհետև պապս, հորս հայրը, որի միակ թոռն էր, որի ասելով՝ մեր օջախի միակ հույսը ես էի, ծերության թռչանքն մինչև վերջին կոպեկը ծախսել էր՝ առանց ինձ հիշելու: Միայն խմած օղու փողերով նա կարող էր տուն բերել հիվանդ-վեց հատ մեծ նուռ, և այդքանը բավական կլիներ, որ հիմա լացս չգար:

Գիտե՞ք, ես հեքիաթներ եմ հնարում, այսինքն՝ ոչ թե հնարում, այլ պատմում եմ: Ես չեմ էլ պատմում՝ տեսնում եմ հնարածս, պատմածս հեքիաթները, և այդ հեքիաթներում միշտ էլ նուռ է լինում: Նուռը միայն մի թղ չէ: Նուռը հեքիաթ է: Նուռն բազմախոս հատիկները, այդ պսպղուն, կարմիր հատիկները անդամանդներ են, հակինթ, իսկ ադամանդ ու հակինթ որտե՞ղ է հանդիպում: Չեքիաթում:

Արդեն քանի օր է՝ ես մտնում եմ մրգերի խանութ ու նայում եմ նուների կույտին: Ես մտովի կճպում եմ բոլոր այդ նուները և հատիկներից ապարանջան եմ սարքում, մանյակ...
Այսօր վաճառողը, երեւի փոքրիկ գրգռելու համար, մի մեծ նուռ էր կտրել, և հյուսիք, արյան նման հյուսիք, կաթկթել էր վաճառատնիկին: Այդ կարմիր կաթիկներն այնպես էին փայլում, այնպես էին կանչում, որ ես չգիմացա, մատս գողտուկ մոտեցրի, որ հետո բերանս տանեմ, բայց կաթիկները սառել էին, սառույց էին դարձել:

- Լացս գալիս է, լաց եղիր,- ասաց պապս,- երբ մարդու լացը գալիս է, պիտի լացի: Եթե ուտել է ուզում՝ պիտի ուտի, եթե խմել է ուզում՝ պիտի խմի...
Յիմա նա մերկ էր և փորձում էր հագնել նոր վարտիքն ու շապիկը, որ թունի, մոթալ պանիր, հացի հետ բերել էր շուկայից: Ես սարսափով մտածեցի, որ վարտիքն ու շապիկը երեւի ուրիշին են, որը հիմա չկա, մեռել է, չկա. թե չէ ինչո՞ւ պիտի վաճառեին շուկայում: Ես մտածեցի, որ այդ մեռածը այս գիշեր կամ վաղը երեւալու է պապիս աչքին և պահանջելու է իր սպիտակեղենը: Ի՞նչ պատասխան պիտի տա: Եվ ես խղճացի պապիս: Ես ներեցի պապիս, բայց, միտնում է, լացս գալիս էր: Որովհետև հանկարծ միտս եկան իմ ապրած բոլոր տխրությունները: Չիշեցի մորս, որը

նուռ, ու ես, իբր ցավից, իբր ջրի տաքությունից լաց էի լինում:
Իսկ երբ արդեն չորացած, հագնված, մաքուր, տաքուկ նստած էի տանը, վառարանի կողքին, երբ մի կուշտ լաց եղած-հանգստացած նայում էի վառարանի դռակից շան լեզվի նման դուրս թռչող բոցին, տեսա մի հեքիաթ, որ դեռ երբեք չէի տեսել:
Գնացք կանգնեց մեր կայարանում, և այդ կանաչ գնացքից ցած իջավ Ձմեռ պապին: Նրա ձեռքին ոչ պարկ կար և ոչ էլ տոպրակ: Այդպես դատարկաձեռն նա մոտեցավ ինձ ու շոյեց գլուխս: Չետո գրպանից մի նուռ հանեց, հետո երկրորդը, երրորդը, չորրորդը, հետո կայարա-



հանկարծ անհետացավ: Չիշեցի նրա անհետացման երեկոն, երբ տանը միայն ես ու հայրս էինք: Իրար հետ չէինք խոսում, իրար չէինք նայում: Ես շաքար էի գցել բաժակիս մեջ և փողբիկ գդալով խառնում էի թեյը: Ես երկար էի խառնում. գդալը զարկվում էր բաժակի պատերին... Չայրս սպասում էր, որ վերջացնեմ խաղս. նրան էլ էր պետք խառնել թեյը: Ծաքարն արդեն հավել-լուծվել էր, բայց ես խառնում էի: Ես գրնգացնում էի բաժակը: Ես երգ էի լսում:
Եվ հայրս ստիպված ասաց.
- Գդալը չե՞ս տա:
- Չէ:
- Լավ,- ասաց հայրս ու թեյը խմեց առանց խառնելու:

Ես նայեցի նրա դեմքին, չգիտեմ ինչ տեսա, բայց հիշում եմ, որ լաց եղա:
- Մարդ ծոխ պես պիտի ապրի,- ասաց պապս,- ուտել ես ուզում՝ կեր, խմել ես ուզում՝ խմիր, երգել ես ուզում՝ երգիր...
Դուռն առանց թակոցի բացվեց, և ներս մտավ թեւքերը քշտած որբեւայրի Վաթեն, մեր հարեւանուհին: Նրանից գոլորշի էր պոկվում և օճառի հոտ էր գալիս, ու ես գլխի ընկա, որ պիտի լողանամ:

- Դե, շուտ, դե, շուտ,- ասաց Վաթեն,- ջուրը սառչում է, տարին վերջանում է: Կեղտոտ մարմնով նոր տարին չեն սկսի, բալա: Ամբողջ տարին կեղտոտ կմնաս, բալա: Դե, շուտ, դե, շուտ:
Նա ինքն էլ հանեց շորերս, գրկեց ինձ ու տարավ, զգեց տաշտակը: Չոր-չոր մատներով տրորում էր թեւերս, թիկունքս, վիզս՝ ինձ թվում էր, թե պլոկում է կաշիս, գլխիս եռացրած ջուր էր լց-

նի գանգը խփեցին, և Ձմեռ պապին էլի գլուխս շոյեց ու վազեց-հասավ շարժվող գնացքին:

Այնպես պարզ տեսա այս հեքիաթը, որ վերջում զարմացա, երբ նուներն անհետացան: Յոթ անգամ տեսա նույն հեքիաթը և դեռ էլի կտեսնեի, եթե չգար հայրս: Չորս ձեռքին ոչ պարկ կար և ոչ էլ տոպրակ: Այդպես դատարկաձեռն նա մոտեցավ ինձ ու շոյեց գլուխս: Ծուռն պահած՝ ես սպասում էի շարունակությանը, սպասում էի հեքիաթի շարունակությանը: Չայրս գրպաններից ոչինչ չհանեց: Ոչ նուռ, ոչ խնձոր, ոչ կոնֆետ, ոչինչ:

Ու ես մտածեցի, որ այս աշխարհում ոչ ոք, ոչ ոք չի ուզում հեքիաթը իրականություն դարձնել: Ախր, ինչ մի դժվար բան էր գրպանից չորս նուռ հանելը...
- Ես գնում եմ կայարան,- ասացի՝ հագնելով վերարկուս:
- Այս ուշ ժամին,- հարցրեց հայրս:
- Չա, այս ուշ ժամին:
- Լավ,- ասաց հայրս,- գնա:
Ես էլի հիշեցի գդալի պատմությունը. ինչո՞ւ չի կոպտում այս մարդը, ինչո՞ւ չի բղավում վրաս, ինչո՞ւ չի արգելում: Եթե կոպտեր, եթե բղավեր, եթե արգելեր, ես կասեի՝ գնում եմ, հեռանում եմ, որովհետև մի նուռն ի՞նչ է, որ այս նոր տարվա գիշերը չես բերել: Բայց նա չի կոպտում, չի բղավում, չի արգելում. նա ասում է՝ «լավ», ու ես ավելի եմ տխրում:

Չայրս էլ դուրս եկավ: Մեզ վրա մրսած մի շուն ոռնաց, բայց մենք ուշադրություն չենք դարձնում: Մեզ վրա ձյուն է թափվում, բայց մենք ուշադրություն չենք դարձնում: Մենք գնում ենք կայարան, որտեղ շուտով կանգ կառնի գիշերվա գնացքը: Ես մտքումս օգնության եմ կանչում հնարածս, տեսածս հեքիաթների բոլոր կախարհներին. մի անգամ, ինչպես եմ, մի անգամ հեքիաթը իրականություն դարձրեք: Ես ձեզանից ոչ տոնածառ եմ ուզում, ոչ սահնակ, ոչ պալատ, ոչ ձի, ես ձեզանից ինչպես եմ, որ այսօր, հենց այս գիշերվա գնացքից ցած իջնի Ձմեռ պապին և ինձ նվիրի չորս նուռ: Չորս նուռ: Չորս նուռ:

Մենք անցնում էինք մրգերի խանութի մոտով, և ես չկարողացա անտարբեր մնալ: Նուների կույտը կիսով չափ պակասել էր: Ես թեւքովս սրբեցի ցուցափեղկի ապակին, որ լավ տեսնեմ, բայց ապակին քրտնել էր ներսից:
- Նուռը թթվաչ է, չէ՞, հայրիկ,- հարցրեցի ես:
- Թթվաչ է:
- Ատամներս մրսում են նուռ ուտելուց,- ասացի ես և մտքումս էլի ինչորում էի կախարհներին. մի անգամ, գուցե մի անգամ թող հեքիաթը հեքիաթ չլինի:

Կառամատուցում կարմիր գլխարկով կայարանապետն էր կանգնած և մի քանի երկաթուղային: Կայարանապետի լապտերիկի լույսը սառչում էր օդում, և այդ լույսի մեջ ձյան փաթիլներն ավելի շատ էին ու ավելի մեծ, ու ավելի թափանցիկ: Չետո լապտերիկի լույսը աղոտացավ, որովհետև մոտենում էր գնացքը՝ հրեշի աչքերի նման լուսարձակներով:
Վագոնների լուսամուտներին կայած մոմագույն դեմքեր անցան մեր կողքով, լուսամուտներ, վարագույրներ, ածուխի, մագուլթի, յուղի հոտ անցավ մեր կողքով, հետո գնացքը կանգ առավ:
Գնացքից ցած իջավ մեկը, բայց դա Ձմեռ պապին չէր, և ինչքան գլխի ընկա, այդ մեկը մատ էր թափ տալիս կայարանապետի վրա:
Մտեցանք: Մարդը բղավում էր.
- Մաքրել, իսկույն մաքրել:
- Լսում եմ,- գլուխս էր տալիս կայարանապետը:
- Չեթապահություն է պետք հաստատել, սա ի՞նչ բարբարոսություն է:
- Լսում եմ,- գլուխս էր տալիս կայարանապետը հեռացող գնացքին:
Ես տուն դարձա մենակ, որովհետև հայրս հանձն առավ մաքրել արձանի ձյունը և մաքրել մինչև առավոտ, մաքրել՝ քանի դեռ ձյուն է գալիս:
- Կվարձատրենք,- խոստացավ կայարանապետը:
Ես տուն հասա՝ պապս չէր սպասել նոր տարուն, քնել էր: Ես էլ մտա անկողին և որոշեցի այլևս երբեք, երբեք հեքիաթներ չհնարել, չտեսնել: Եվ կարծեմ առաջին անգամ առանց հեքիաթ տեսնելու քնեցի:
Իսկ առավոտյան բարձիս տակ չորս նուռ գտա:
Իսկ առավոտյան պապս վառարանի վրա աղյուս էր տաքացնում, որ դնի երկու վերմակով փաթաթված, դողացող հորս ոտքերի տակ:
Ու ես մտածեցի, որ այս աշխարհում ամենից, ամենից դժվար բանը հեքիաթն իրականություն դարձնելն է...

Արցախիցի ականավոր վիրաբույժը

Աշխարհահռչակ գիտնական, անատոմ, մարդաբան Անդրանիկ ճաղարյանը ծնվել է Արցախի Ասկերանի շրջանի Աստղաշեն գյուղում: Այս տարվա մայիսին լրացել է ականավոր գիտնականի ծննդյան 100-ամյակը:

Ա. ճաղարյանը մշակել է դեմքի պլաստիկ վերականգնման մեթոդը: Դեռևս 1970-ին ևս ՋեՄՐ ԳԱ Հնագիտության եւ ազգագրության ինստիտուտին կից հիմնել է մարդաբանության լաբորատորիա: Գիտնականը բրոնզեդարյան մարդկանց գանգերի հիման վրա վերականգնված դիմաքանդակների պատկերասրահ է ստեղծել ՋեՄՐ ազգագրության թանգարանում: Վերականգնել է բանաստեղծ Պետրոս Դուրյանի դեմքը, ուրարտական եւ Ենեգավիթի 6000 տարվա բնիկների դեմքերը: Բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Երեւանի բժշկական ինստիտուտի օպերատիվ-վիրաբուժական եւ տոպոգրաֆիական անատոմիայի ամբիոնի վարիչ Անդրանիկ ճաղարյանը

բժշկական աշխարհում հայտնի է որպես «Սրտի վիրաբուժության ատլաս»-ի հեղինակ: Նրա վերականգնած դիմաքանդակներից մի քանիսը դարձել են Նոր Չեչան-դիայի, Լիբանանի ազգային թանգարանների սեփականությունը: Անդրանիկ ճաղարյանը ԱՄՆ-ի հայ մասնագետների միության անդամ է, համաշխարհային «Գրան պրի»-ի մրցանակակիր /1958թ., Բրյուսել/:

Ըստ Արցախի պատմա-երկրագիտական թանգարանի տնօրեն Մելանյա Բալայանի՝ Նա, դեռևս չունենալով բժշկական որեւէ կրթություն, աշխատել է անատոմիկում: 16 տարեկանում փորձել է ընդունվել բժշկական ինստիտուտ, եւ երբ նրան ասել են, որ տեղ չկա, Նա պատասխանել է, որ իր աթոռն իր հետ բերել է: Տեսնելով տղայի այդօրինակ ձգտումը դեպի բժշկություն, նրան ընդունում են համալսարան: Հետաքրքիրն այն է, որ երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին ճաղարյանը վերապատ-

րաստվել ու դարձել է զինվորական օդաչու: Այնուհետեւ երկար տարիներ դեկավարել է Երեւանի բժշկական ինստիտուտի անատոմիայի ամբիոնը՝ 1960-ական թվականներից մինչեւ 1982 թվականը: Հայ իրականության մեջ Անդրանիկ ճաղարյանը համարվում է եզակի մասնագետ, ով գանգի ոսկորների հիման վրա վերականգնել է մարդու դեմքը: Նա վերականգնել է նաեւ Հոփանավանքի Հասան-Ջալալյանների տոհմի իշխաններից մեկի դիմաքանդակը:

Վերջերս այցելելով թանգարան՝ գիտնականի որդի, քանդակագործ Վլադիմիր ճաղարյանը հոր մասին պատմող ցուցանմուշներով համարել է թանգարանի էջը, այդ թվում՝ նրա վիրաբուժական գործիքները, Մարտիրոս Սարյանի նկարած գիտնականի դիմանկարը, տարբեր երկրներից բերված նվիրատվություններ, մասնավորապես՝ արաբական սուլթաններից մեկի նվիրած ձեռնափայտ ու գլխաշորը, որոնք ավելի ամբողջական են



դարձնում գիտնականի կենսագրական էջը:

Լիլիա ԲԱԴՐՅԱՆ

Բարի բժիշկը Արցախում



Սուրբ դեռևս պատանի էր: Հայրը նրան տվել էր կրթության հեթանոսական դպրոց, որն ավարտելով՝ երիտասարդը սկսել էր բժշկական արվեստ սովորել եւ հռչակվել էր որպես բժիշկ: Մաքսիմիլիան կայսրը (284-305թթ), ով հայտնի էր քրիստոնսիական վարքով, ուզում էր նրան տեսնել իր կայսրության ներքո: Այդ ժամանակ քաղաքում գաղտնի բնակություն էին հաստատել 303 թվականի քսան հազար քրիստոնյաների դաժանավարտ այրումից մահապուրծ եղած Երմոդինե Սուրբը եւ այլ քրիստոնյաներ: Երմոդինեն բազմիցս տեսել էր իրենց ապաստարանի մոտով քայլող Պանտալեոնին, եւ մի անգամ կանչելով նրան իրենց կացարան՝ պատմում է քրիստոնեական հավատքի մասին: Դրանից հետո Պանտալեոնը հաճախ էր այցելում Երմոդինեին: Նրա՝ քրիստոնյա հավատքը ընդունելու հետ կապված իրաջք պատմություն կա: Մի անգամ փողոցով քայլելիս երիտասարդը տեսնում է օձի խայթոցից մահացած երեխայի, եւ օձին, որը կողքին էր: Պանտալեոնը սկսում է աղոթել Հիսուս Զրիստոս Աստծուն՝ երեխայի վերակենդանացման եւ թունավորի ոչնչացման մասին խնդրանքով, եւ հստակ որոշում է, որ իր աղոթքի կատարման դեպքում՝ կղառնա Հիսուսի հետնորդ եւ կընդունի Սկրտություն: Երեխան վերակենդանանում է, իսկ թունավոր օձը, մասերի բաժանվելով, ոչնչանում է նրա աչքի առջեւ: Այս իրաջքից հետո Պանտալեոնը ընդունում է քրիստոնեությունը, մկրտվում է Սուրբ Երմոդինեի կողմից Պանտալեոն անունով, որ նշանակում է բազմողորմ: Սուրբ Պանտալեոնը նվիրում է իր կյանքը տառապալներին, հիվանդներին, աղքատներին: Նա անհատույց բուժում էր բոլոր դիմողներին՝ Հիսուս Զրիստոսի անունով: Նա այցելում էր բանտարկյալներին, հատկապես քրիստոնյաներին, որոնցով լեցուն էին բանտերը, եւ բուժում էր նրանց վերքերը: Շուտով բարի բժշկի համբավը տարածվում է քաղաքով մեկ: Թողնելով միւս բժիշկներին՝ բնակիչները դիմում էին միայն Պանտալեոնին: Նախանձից դրդված բժիշկները հայտնում են կայսրին, որ Պանտալեոնը բուժում է քրիստոնյա բանտարկյալներին: Մաքսիմիլիանը կանչում է նրան եւ փորձում համոզել մերժելու այդ լուրը՝ գոհաբերություն կատարելով կուռքերին, բայց Պանտալեոնը խոստովանում է իր քրիստոնյա լինելն ու կայսրը աչքի առաջ Հի-

սուս Զրիստոսի անունով ապաքինում է թուլացածին: Դաժանացած կայսրը գլխատել է տալիս նոր ապաքինված մարդուն, ով փառաբանում էր Հիսուսին, իսկ Սրբին դաժան տանջանքների է ենթարկում: Աստված հայտնվում է Սրբին եւ ամրացնում նրան Նախքան տանջանքներ կրելը: Նրան կախում են ծառից եւ պատռոտում երկաթյա ճակեթով, մոմերով այրում են մարմինը, եռացող անագի մեջ են խցկում, սուզում են ջրի մեջ՝ քարեր կախելով վզից: Բոլոր տանջանքների ժամանակ Սուրբը մնում էր անվնաս եւ համարձակություն պարսավում էր կայսրին: Գազազած կայսրը հրամայում է իր զինվորներին սրի տակ առնել բոլորին, ովքեր փառաբանում են Հիսուսի անունը, իսկ Մեծ Նահատակին գլխատել: Գլխատման ժամանակ Երկնային Ձայն է լսվում, որը կանչում է տառապալ Նահատակին Երկնային Թագավորություն: Լսելով դա՝ դահիճները հրաժարվում են իրականացնել Սրբի գլխատումը, սակայն Պանտալեոնը պատվիրում է իրականացնել կայսր հրամանը՝ ասելով, որ այլապես նրանք ապագա կյանքում գործ չեն ունենա իր հետ: Չինվորները արցունքներով հրաժեշտ են տալիս Սրբին՝ համբուրելով նրան: Երբ նրան գլխատում են, վերջից կաթ է սկսում ծորալ: Չիթապտողի ծառը, որին նրան գամել էին, նրա մահվան պահին պտուղներ է տալիս: Բազում ներկաներ սկսում են դարձի գալ առ Աստված: Սրբի մարմինը, որը նետվել էր խառույկի մեջ, չէր վնասվել եւ թաղվել էր քրիստոնյաների կողմից (305թ): Հետագա խոշտանգումներից խուսափելու նպատակով Պանտալեոնի նվիրյալները նրա սուրբ մասունքները տարածել են ողջ քրիստոնյա աշխարհով մեկ (ազնիվ գլուխը թաղված է ռուսական Աֆոնի Սուրբ Պանտալեոնի վանքի հիմքում): Ուղղափառ եկեղեցում Սուրբ Պանտալեոնը պատվելի է որպես ահեղ Սուրբ, զինվորների հովանավոր: Այդ պատիվը բացահայտում է նրա առաջին անունը (Պանտալեոն՝ նշանակում է «առյուծ ամեն ինչում»), իսկ նրա երկրորդ անունը, որ տրվել է մկրտության ժամանակ, մատնանշում է նրա գորավոր բժշկությունը: Արեւմուտքի քրիստոնյաների մոտ նա համարվում է բժիշկների հովանավոր: Այս երկու հովանավորության ընդհանրությունը ակնհայտ է նրանով, որ զինվորները ավելի հաճախ են վերքեր ստանում եւ բուրբից շատ են ապաքինման կարիք գգում: Դրա համար էլ քրիստոնյաները, ովքեր հոգեւոր պայքար են

մղում, նույնպես դիմում են այս Սրբին՝ հոգու վերքերը բուժելու խնդրանքով:

Սուրբ Պանտալեոնի մասունքներից մեկն էլ Մեծ շենի վերածված եկեղեցու հիմքում է գտնվում, ինչի պատճառով էլ ուխտագնացները սրբավայր են գնում՝ հիվանդների համար առողջություն խնդրելու: Ականատեսները վկայում են, որ սուրբը միշտ էլ ունկնդիր է եղել իրենց աղոթքներին, դրա համար եկեղեցին կոչել են Բարի բժիշկ: Սերնդեստերունդ անցելով, բերնեբերան փոխանցվելով՝ հարյուրամյակների ընթացքում Բարի բժիշկ անվանումը ենթարկվել է հնչյունափոխության՝ դառնալով հարազատ անուն ժողովրդի համար՝ Պարին պիժ:

Իր ամենատես բարձունքից Մեծ շենին հսկող Պարին պիժ եկեղեցին կառուցվել է 1658 թվականին: Այժմ եկեղեցու հոգեւոր առաջնորդն է Մետրոպ քահանա Մկրտչյանը, ով պարբերաբար պատարագներ է արարողություններ է կատարում եկեղեցում:

Խորհրդային տարիներին անգամ Պարին Պիժ ուխտատեղի էր ոչ միայն տեղացիների, այլեւ այլաբնակ հայերի համար: Մեծշենիները լեգենդներ են պատմում նրա աստվածային գործության մասին: Նրանք լավ են հիշում նաեւ 1989-ի սեպտեմբերի 1-ը, այն օրը, երբ Հայ Առաքելական եկեղեցու Արցախի վերաբացված թեմի առաջնորդ Պարգեւ արքեպիսկոպոս Մարտիրոսյանն ուղղաթիռով վայրէջք կատարեց սրբավայրի բարձունքում, իսկ շրջափակված եւ արդեն պատերազմի բովով անցնող բերդածորգները ուխտագնացների հավատով շարք բռնեցին սարն ի վեր՝ դեպի Պարին Պիժ, որտեղ նրանք՝ նորածնից մինչեւ ծերունի, մկրտվեցին՝ օծվելով որպես քրիստոնյա:

Մոսկվայաբնակ մեծշենի եղբայրներ Յուրա, Մորա եւ Սերո Հովհաննիսյանների նախաձեռնությամբ ու հովանավորությամբ վերականգնվել է բերդածորգների ամենագոր սրբավայրը: Եկեղեցին վերանորոգվել է հիմնովին՝ դրսից եւ ներսից, բարեկարգվել է տարածքը:

Խաղաղ ապրելու տենչը, արդար աշխատանքի հույսն ու հավատն է հայ ժողովրդի ստեղծարար աշխատանքի հիմքում: Արցախցին իր բնատուր տաղանդով կերտում է սոր երկիր, վերանորոգում է ոչ միայն իր տունը, գյուղը, քաղաքը, այլեւ սրբավայրը, որը դառնում է միջնորդ մեր եւ Աստծո միջեւ:

Սուլյա ԱՎԱԳՅԱՆ Իգոր ՉԱՔԱՐՅԱՆ

Ստեփանակերտի հաջատուր Աբովյանի անվան դպրոցի ներկան ու ապագան



տեսական տեխնիկումի շենքում, 1936-ից՝ ներկայիս «Արմենիա» հյուրանոցի տեղում, իսկ 1994թ. նոյեմբերի 1-ին դպրոցին տրամադրվեց Կևունյանցների 48 հասցեում գտնվող շենքը:

1936թ. դպրոցն ստացավ Մաքսիմ Գորկու անունը, 1988թ. մանկխորհրդի որոշմամբ դպրոցը վերանվանվեց Կ. Աբովյանի անվան թիվ 1 միջնակարգ դպրոց:

Տարեցտարի ավելանում էր աշակերտների քանակը: Շենքային պայմանները, սակայն, ավելի սուղ էին դառնում: Դրա պատճառով դպրոցը գործում էր երկու հերթափոխով, ինչը չէր կարող չազդել կրթական գործընթացի վրա: Դեռ այս հանգամանքն է առիթ հանդիսացել նոր

շենքի շինարարության համար: 2008թ.

«Փրկենք երեխաներին» կազմակերպության հայաստանյան գրասենյակը ձեռնամուխ եղավ դպրոցի մասնաշենքի կառուցմանը, որն ավարտին հասցվեց 2010-ին: Մասնաշենքի բացման հանդիսավոր արարողությանը ներկա էր Արցախի նախագահ Բակո Սահակյանը, ով, ի դեպ, դպրոցի շրջանավարտ է:

Կրթօջախի վերանորոգման աշխատանքները շարունակվեցին նաև հետագայում: Ռուսաստանյան բարերար Լիկոյա Սարկիսովի հովանավորությամբ դպրոցի տարածքում կառուցվեց մի մասնաշենք եւ: Նոր մասնաշենքը՝ հարմարավետ եւ ճարտարապետական հետաքրքիր լուծումներով, շահագործման հանձնվեց 2014-ին: Այն ունի մեծ դահլիճ, գրադարան, հրաձգարան, սպորտդահլիճ, շենքին կից կա մեծ մարզադաշտ: Շենքի մոտ հայ նոր գրականության հիմնադիր հաջատուր Աբովյանի արձանն է եւ Մաշտոցյան այբուբենի տառերով կողով:

Դպրոցն այսօր աշակերտների քանակով ամենամեծերից մեկն է հանրապետությունում: Ներկայումս ունի 1586 աշակերտ, որից 190-ը նախադպրոցական 6 խմբերում են ընդգրկված:

Դպրոց-բանակ կապը միշտ էլ կարելու վել է երկուստեք: Դպրոցում հաճախակի են կազմակերպվում հանդիպումներ սպաների հետ: Ավանդական են դարձել արհմիության դասերը՝ նվիրված ԼՂՀ Անկախության հռչակման օրվան եւ Մայիսյան եռատոնին: Արցախյան պատերազմում նահատակվածների հիշատակին դասարաններ են անվանակոչվում, հանդիպումներ կազմակերպվում ծնողների, հարազատների, մարտական ընկերների հետ:

Արցախյան կրթատեղծ բանակին անդամագրվեցին եւ հայրենիքը կրծքով պաշտպանել երդվեցին դպրոցի բազմաթիվ շրջանավարտներ: Կոլեցիոն: Հայրենցին: Ցավոք, նաեւ ընկան շատերը: Դպրոցի շրջանավարտներից 130-ը գոհվել են մարտադաշտում: 2016թ. ապրիլի 21-ին թշնամու գնդակից ընկավ դպրոցի եւս մեկ շրջանավարտ՝ Մարտա Դանիելյանը: Դպրոցի շենքի մոտ նրան եւ բոլոր նահատակներին նվիրված հուշակոթող է տեղադրվել:

Դպրոցի տնօրեն ժաննա Բալայանը մեծ հպարտությամբ է խոսում ուսուցիչների եւ աշակերտների հաջողությունների մասին: Ծանոթանալով դպրոցի գրանցած հաջողություններին՝ հասկանում են, որ հպարտանալու իրավունք ունի: 2004-2005 ուսումնական տարում դպրոցը ճանաչվեց հանրապետության «Տարվա լավագույն դպրոց» (տնօրեն՝ վաստակավոր ուսուցիչ Ռոմելա Դադայան): Ուսուցիչներից Ի. Թադետույանն ու Ա. Վանյանը մասնակցել են «Լավագույն ուսուցիչ» մրցույթին եւ քաղաքային փուլում հաղթող ճանաչվել:

Դպրոցի հայոց լեզվի եւ գրականության ուսուցչուհի Ռոմելա Թովմայանը պարգևատրվել է ՀՀ ԿԳՆ ոսկե մեդալով, մի շարք ուսուցիչներ արժանացել են «Վաստակավոր մանկավարժ», «Սպորտի վաստակավոր գործիչ» կոչման:

Աշակերտները պարբերաբար հաջողություններ են գրանցում ԼՂՀ-ում եւ ՀՀ-ում անցկացվող կրթական, սպորտային, գիտական մրցույթներում: Ուսուցիչները որոշ ավստանքով փաստում են, որ իրենց

աշակերտների մի մասը հիմնական դպրոցում չեն հասցնում լրիվությամբ դրսևորվել, բացահայտվել եւ հաջողություններ են գրանցում ավագ դպրոցում:

Յետաքրքրական է, որ ներկայումս դասավանդող ուսուցիչների մեծամասնությունը դպրոցի նախկին շրջանավարտներ են:

Կաջատուր Աբովյանի անվան դպրոցի փոխտնօրեն, քիմիայի եւ կենսաբանության ուսուցչուհի Իրա Թադետույանը նշեց, որ աշակերտները համարյա ամեն տարի հաջողություններ են գրանցում ասմունքի մրցույթներում, ԼՂՀ Ազգային Ժողովի գավաթի խաղարկությունում: Փոխտնօրենը, ով եւս դպրոցի շրջանավարտ է եւ դասավանդում է 2001-ից, նշում է, որ իրեն հարազատի պես են ընդունել, ինչն էլ նույն վերաբերմունքն ունի դպրոցի ուսուցիչների ու աշակերտների նկատմամբ:

«Դպրոցն առանձնանում է հարմարավետ շենքային պայմաններով, ինչը հնարավոր դարձավ հովանավորների շնորհիվ: Մնացած ամուսներով՝ բոլոր ուսուցիչների նման կրթում, դաստիարակում ենք աշակերտներին, որով եւ նման ենք իրար» - շեշտեց Ի. Թադետույանը:

Ուսուցչական կազմը դպրոցի առավելություններից է համարում եւ այն, որ բոլոր ուսուցիչներն ապահովված են ժամաքանակով, աշխատում են տեխնիկապես հագեցած պայմաններում:

Իր գործունեության ողջ ընթացքում մայրաքաղաքի առաջին դպրոցը թողարկել է բազում շրջանավարտներ՝ մեր լեռնաշխարհի արժանավոր գավաթներ, պետական, հասարակական-քաղաքական գործիչներ, գիտության եւ կրթության նվիրյալներ, մշակույթի, սպորտի գործիչներ:

Լիախույս ենք, որ ապագայում եւս ակասատես կլինենք կաջատուր Աբովյանի անունը կրող դպրոցի շրջանավարտների ազգային, հայրենաստեղծ գործունեությանը, որում, անշուշտ, իրենց ավանդն ունեն մանկավարժները:

S. ԱՐԱՋԱՆՅԱՆ

Օճաներ՝ հույսի համար

Հոկտեմբերի 9-ին Ստեփանակերտում կայացած Բերքի տոնին ներկայացված հարյուրավոր տաղավարների մեջ առանձնանում էր մեկը: Գյուղական բերք ու բարիքների կողքին իր արտադրանքն էր ցուցադրում Լիլիթ Տոնոյանը: Իսկ ցուցանմուշները բնական հումքից պատրաստված օճաններն ու բնական յուղերն էին: Լիլիթ Տոնոյանը Քաշաթաղի շրջանի Գողթանիկ համայնքի ֆիզիկայի ուսուցչուհի է: Մասնագիտությամբ կենսաֆիզիկոս է, այժմ սովորում է Երեւանի պետական համալսարանի ասպիրանտուրայում:

Օճաների պատրաստման գաղափարը ծագել է «ԷկոԼաք» կայուն զարգացման բնապահպանական ծրագրին մասնակցելուց հետո: Որպես համայնքի զարգացման ծրագիր, Լիլիթ Տոնոյանն առաջարկեց բացառապես բնական հումքից օրգանական օճաններ պատրաստել, դրանք վաճառել, վաճառքից ստացված հասույթով գյուղի դպրոցում «Ստեղծագործարան» բացել: Քանի որ գյուղում խմբակներ, երեխաների համար ակումբ չի գործում, ուստի որոշեց երեխաների համար որեւէ օգտակար բան անել: Ստեղծագործարանի նորոգման աշխատանքներն արդեն սկսված են: Աշխատանքների ավարտից հետո ստեղծագործարանում մի շարք սեմինարներ, ֆիլմերի դիտումներ, բնապահպանական միջոցառումներ եւ այլ հետաքրքիր աշխատանքներ են իրականացվելու:

Օճաները պատրաստում է հիմնական

ում իր մշակած բաղադրատոմսերով: «Կան հայտնի, դեռնա հնագույն ժամանակներից մեզ հասած բաղադրատոմսեր, որոնք եւս օգտագործում են, սակայն հիմնականում իմ մշակած յուրօրինակ բա-



ղադրատոմսերով եմ աշխատում: Կախված յուրաքանչյուրի մաշկի տեսակից՝ կազմում եմ հատուկ բաղադրատոմսեր՝ օգտագործելով համապատասխան բնական յուղեր եւ դեղաբույսեր» - նշում է Լիլիթը: Արցախյան հողում աճող բույսերը, օրինակ՝ ուրցը, նախան, երիցուկը եւ գալազան դեղաբույսեր եւս օճանների ու բնական յուղերի հիմքն են կազմում:

«Մեր երկիրը հարուստ է բազմաթեսակ դեղաբույսերով. չպետք է անտեսել այս հանգամանքը: Պետք է օգտվել բնության բարիքներից, եւ, ինչու չէ, Արցախը աշխարհին ներկայացնել նաեւ այս ապրան-



քատեսակով»,- ասում է Լիլիթը: Լիլիթը նաեւ պատերազմից մնացած ծանր հիշողությունները մոռացության տալու միջոց է գտել: «Նախատեսում ենք նաեւ, այսպես կոչված, «պատերազմական աղբի» վերամշակման ծրագիր իրականացնել, որի ընթացքում ստեղծագործարանի անդամները գինամթերքի մնացորդներից ինչ-որ կրեատիվ իրեր են

պատրաստելու, այսինքն՝ վատ հիշողությունները վերածելու են գունագեղ, գեղեցիկ իրերի»,- նշում է Լիլիթ Տոնոյանը:

Նման արտադրանքի պահանջ իրականում կա՝ եթե իրագեղ լինեն: Արցախում առաջին անգամ է ներկայացնում: Վաճառքը հիմնականում ցույրն է կատարում, Երեւանում: Արտադրանքով շատերն են հետաքրքրված, ուզում են Արցախի համար ինչ-որ բանով օգտակար լինել: Շատերն են սիրել այս յուրօրինակ ծրագիրը:

Ստեփանակերտում տոնավաճառի այցելուները հիմնականում զարմացած էին: Որոշ մարդիկ երեւանում արդեն տեսել էին նման արտադրանք, սակայն Արցախում սա նորամուծություն էր: Վաճառքի մեծ մասը նախնական պայմանավորվածության համաձայն է եղել: Հիմնականում Soap for hope («Օճան՝ հույսի համար») ֆեյսբուքյան խմբի (<https://www.facebook.com/Soap-for-Hope>) միջոցով մարդիկ պատվերներ են կատարել եւ տոնավաճառի ընթացքում ձեռք բերել, մի քանի գևորդներ էլ տեղում ծանոթացան ու հետաքրքրվեցին:

«Այս ծրագրի միջոցով ուզում եմ բոլորին ցույց տալ, որ անհնարին ոչինչ չկա, եւ իրական փոփոխությունը գալիս է ներսից, երբ մենք ինքներս ամեն ջանք, եռանդ ու ստեղծագործ միտք ենք ներդրում մեր շուրջը գեղեցիկ դարձնելու համար»,- ասում է երիտասարդ կենսաֆիզիկոսը:

S. ԱՐԱՋԱՆՅԱՆ

Յուշեր LՂՅ Գերագույն խորհրդի առաջին նախագահ Արթուր Մկրտչյանի կյանքից



Դանդաղ առաջեց...
Առանց հարեան դժվար է բայել:
Այս քառյակով էլ փակվում է գիրքը:
Այս պատերազմը մի քննություն էր ամենքիս համար:
Պարզ դարձավ մի բան.
Հաստատ իմացանք՝ ով է կոկոզը,
Ով էր մեռնողը,
Եվ մեր խաղից դուրս մնացողը:

Ես Արթուր Մկրտչյանի ուսուցիչն եմ եղել Ուխտաձորի միջև. դպրոցում: Դասավանդել եմ յոթ տարի: Դեռ առաջին տարիներից տղան աչքի է ընկել իր ընդունակություններով, որին չէի կարող ուշադրություն չդարձնել: Այդ էլ պատճառ դարձավ, որ մեր միջև հաստատվի առանձնահատուկ հարաբերություններ: Այն առավել հարազատ բնույթ ստացավ բարձր դասարաններում: Մեր կապը շարունակվեց նաև միջնակարգն ավարտելուց հետո՝ թե բարձրագույնում սովորելիս եւ թե աշխատանքի ընթացքում: Ամեն անգամ հանդիպելիս ինչ-որ նոր բան էինք քննարկման առարկա դարձնում:

Այս տողերը ծնունդ են առել իմ սան Արթուր Մկրտչյանի անվան շուրջը խորհրդածելիս: Ընդամենը երեսուներեք գարուն է նրա ապրածը: Կայծակի պես շողաց ու գնաց: Նա էլ կարող էր ափսոսալ, որ իր սկիզբը նաև իր վերջը եղավ: Բայց այդ սկիզբն այնքան վաստակ ունեցավ, որ հետմահու կյանքով ապրելու փառք սկսեց: Նա դարձավ իր հայրենիքի եւ գինվորը, եւ գիտականը, եւ քաղաքական գործիչը՝ ընդմիջտ մնալով ազնիվ, խոնարհ ու բարի: Այո՛, նա մարդկային այդ հատկանիշների խորհրդանիշն էր: Ով իմանա, գուցե հենց այդ նվիրական հատկանիշների գոհն էլ դարձավ:

Նրա մահը հանկարծակի բերեց ինձ: Ստորեւ ներկայացնում եմ իմ հուշերը՝ կապված նրա կյանքի հետ:
Հույսով եմ, որ մեր մատաղ սերնդի դաստիարակության համար կարելուր նշանակություն կունենա:
Առաջաբանի փոխաբան
Իմ «Պատերազմը եւ մենք» պատմվածքների ժողովածուն բացվում է այս քառյակով:
Մարտն ավարտվեց,
Եվ գումարտակը՝ նոսրացած շարքով

Երբ կորցնում ես անչափ հարազատ մարդուն, ասես դատարկվում ես եւ ակամա գերի են դառնում նրա հետ ապրած հուշերի: Եվ հենց դրանք էլ ինձ ստիպեցին գրիչ վերցնել:

Մանկություն
- Անչար մանուկ ունեմ,- ասում էր Լյուսյա մայրիկը,- ու որդու սեւագանգուր մազերով գլուխը գրկելով՝ համբուրում էր նրա ճակատը: Հարեանները գարմանում էին փոքրիկի բանիմացությունից, եւ որպես բարու եւ խոնարհության կրող՝ օրինակ էին դարձնում իրենց որդիներին: Հիշում եմ՝ դեռ նոր էր փոխադրվել հինգերորդ դասարան, Երեւանի դրամատիկական թատրոնից գյուղ եկան՝ «Գիքորը» ցուցադրելու: Մի օր առաջ պարզ

վեց, որ Գիքորի դերակատարը հիվանդացել է: Թատրոնի ռեժիսորը գյուղի փոքրիկներին հավաքեց՝ ընտրություն կատարելու: Ես գլխից Արթուրին հավանեց: Արթուրը սկզբում չէմուծեմ արեց, բայց երբ իմացավ, որ թատրոնը հուշարար ունի՝ համաձայնվեց:

Բեմում Գիքորի դերում նրա երեսվոր համագյուղացիների ծափահարությանն արժանացավ: Նրա ընդունակություններից գարմացած մնացին ամենքը: Թատրոնի ավարտին ռեժիսորը նորից բեմ հանեց Արթուրին եւ իր շնորհակալությունը հայտնեց ոչ միայն ծնողներին, այլև ողջ գյուղին, որ նման աչքաբաց երեխա ունի:

Այդ օրվանից էլ անշահախնդիր մտերմություն հաստատվեց ռեժիսորի եւ Մկրտչյանների ընտանիքների միջև: Ամեն անգամ էլ Արթուրենք ընտանիքից երեւան գնացողը ռեժիսորի պատվավոր հյուրն էր:

Իսկ հետագայում, երբ Արթուրը քննություններ պիտի հանձներ համալսարան ընդունվելու համար, նույն օջախում էր ապրում: Համալսարան ընդունվելու մասին առաջինը ռեժիսորն իմացավ ու հեռագրեց գյուղ՝ Արթուրի ծնողներին: Ինչպես տեսնում եք՝ շատ առաջ անցավ:

- Դեռ նոր էր կացին բռնելը եւ փայտ կտրելը սովորել, - պատմում է հարեւանուհի Քնար մայրիկը, - եկա տեսա իմ բակի փայտը կտրած ու խնամքով դարձած: Դես որոնեցի, դեն որոնեցի՝ իմանալու համար, թե ում գործն է դա, չհաջողվեց: Ամենավերջում պարզվեց, որ Արթուրն է արել. մեռնեմ նրա ջանին:

Դպրոցական կյանք
Արթուրի՝ հինգերորդ դասարան փոխադրվելը եւ իմ՝ հարազատ գյուղի դպրոցում աշխատանքի անցնելը համընկան իրար: Ես պիտի պատմություն դասավանդեի այն դասարանում, որտեղ Արթուրն էր սովորում: Դասարանում լավ սովորողներ շատ կային, բայց Արթուրն ուրիշ էր: Նրա հետաքրքրությանը չափ չկար: Հենց սա էլ հիմք դրեց մեր մտեր-

մությանը: Այն ո՞ր ուսուցիչը չէր սիրի նման աշակերտին: Հարցեր էր բերում մեջտեղ, որ զարմանքը պաշարում էր ինձ:

Երկու տարի անց զգացի, որ տղան սիրահարված է պատմությանը: Դրանում առավել ես համոզվեցի, երբ մաթեմատիկայի ուսուցչուհին այսպես դիմեց ինձ.

- Ընկեր հայրան, պարզվում է, որ ինձ խանգարում ես:

- Ինչպե՞ս թե...,- գարմացա ես:

- Տղան մաթեմատիկա էր սիրում, հիմա պարզվել է, որ հիասթափվել է:

- Եվ ի՞նչ:

- Պարզվում է, որ առել ես իմ ձեռքից:

- Եվ դրա համար նեղանում ես:

- Բնավ, պարզապես ուզում եմ, որ նրա հանդեպ ուշադիր լինես:

Ես շնորհակալություն հայտնեցի ուսուցչուհուն:

7-րդ դասարանում հետաքրքրվեց երկու սիստեմների միջև խաղաղ գործակցության լեհիսյան սկզբունքի հարցում: Որքան փորձեցի համոզել, որ նման հարցեր շոշափելը վատ է, բայց մեկ է, նա ընդդիմացավ: Ես ստիպված եղա հարցի մասին հանգամանորեն խոսել: Եվ զգացի, որ իրեն բավարարված չզգաց:

Մի քանի օր անց մարզկենտրոնից տեսչական ստուգումների եկան դպրոց: Պատմության մասնագետը Արթուրենք դասարանում վարած իմ դասը լսեց: Եվ երբ պատրաստվում էինք դասարանը թողնել, դիմեց ինձ.

- Դու գնա, ես մի քանի րոպե զբաղեցնեմ դասարանը:

- Ինչո՞ք,- ասացի ես:

Երբ դասարանից հեռանում էի, Արթուրը մի տեսակ զաղտագողի շշնջաց.

- Ընկեր հայրան, կարելի՞ է այդ տեսուչին հարց տալ:

- Ինչո՞ւ չէ,- ասացի ես ու շտապեցի ուսուցչանոց:

Հարունակելի...
Միքայել ԽԱՉԱՏՐՅԱՆ

Մեծ վանդակների՝ քրիստոնյաների դահիճների առեղծվածը

Մեր նեւոց, ստոր եւ անպատկառ հարեւանները՝ ի դեմս Ադրբեջանական Հանրապետության եւ Թուրքիայի ազգային-շովինիստական ղեկավարության, կտրակալապետներ են հայկական անկախ պետությունների՝ Հայաստանի Հանրապետության եւ LՂՅ-ի հետ խաղաղ գոյակցությանը, եւ համատեղ ուժերով անում են ամեն հնարավորը, որպեսզի մեկընդմիջտ ոչնչացնեն ավելի քան հինգ հազար տարի իր պատմական հողի վրա ապրող հայկական ազգաբնակչությանը:

րի ազգային ակադեմիայի մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի էթնոգենոմիկայի լաբորատորիայի վարիչ Լեւոն Եպիսկոպոսյանը հայտարարեց, որ բրունգե դարի մարդու գենետիկական պատկերը հստակեցնելու համար Եվրասիայի տարբեր անկյուններից վերցված ԴՆԹ-ի նմուշների փորձաքննություն է կատարվել: Այդ թվում՝ ութ նմուշներ վերցվել են Հայաստանի տարածքով մեկ սփռված հնեաբանական տարբեր հուշարձաններից: Դրանք թվագրվում են միջին եւ ուշ բրունգե, ինչպես եւ երկաթե դարերով, որոնց տարիքը ճշգրիտ որոշվում է ուսումնասիրվող մարդկային ոսկորների ռադիոածխածնաթմային հետազոտությամբ:

րոջ ժամանակակից հայ ժողովուրդը բավականին խոր արմատներ ունի եւ, ամենայն հավանականությամբ, ամենահին ազգն է երկրի մուլտրակի վրա: Տողերիս հեղինակն այս առումով որեւէ կասկած չունի, քանի որ տվյալ հետազոտությունն անց է կացվել Կոպենհագենի համալսարանում, որի հեղինակները 44 փորձագետներ էին աշխարհի 13 երկրներից:

Հայ գիտնականները պատրաստակամությամբ մասնակցեցին գենետիկական այս կարեւորագույն հետազոտությանը: Հայաստանն Անդրկովկասի տարածաշրջանի (Հարավային Կովկաս) միակ երկիրն էր, որ տրամադրեց մարդկային ածուխներով ութ նմուշներ՝ վերցված, ինչպես ավելի վաղ նշեցինք, մեր երկրի տարբեր ծայրերում սփռված հնագիտական հուշարձաններից, եւ դրանք փոխանցեց գիտնականների խմբին՝ Դանիայում անցկացվող լաբորատոր հետազոտությունների համար:

Ադրբեջանական Հանրապետությունը եւ Թուրքիան կտրակալապետ հրաժարվեցին համաշխարհային մասշտաբի այս կարեւորագույն գիտական նախագծին մասնակցելուց, որը հսկայական նշանակություն ունի պատմական գիտության, հնեաբանության, ազգագրության եւ ազ-

գի գենետիկական էթնոգենեզի համար, ինչը կհանգեցնի համաշխարհային պատմության՝ ինչպես ամենահին, այնպես էլ երիտասարդ ժողովուրդների ու ազգությունների վերաբերյալ ճշգրիտ դասագրքի ստեղծմանը: Հրաժարվեցին այն պատճառով, որ Թուրքիայի պատմությունը, որը սկիզբ է առել սելջուկ ցեղերից, որոնց պատկանում են այդ թվում եւ, այսպես կոչված, ադրբեջանցիները, թուրք մեսիտները, իրանական թուրքերը եւ այլ մանր ջոջվոր ցեղեր, սկսվում է XI դարի կեսից:

Երիտասարդ ազգերին եւ պատկանում եւ վրացիները, այսպես կոչված՝ շորջիցիները՝ գերոզիցիները: Ի տարբերություն այդ ազգերի, որոնց հեղինակը համարձակվում է մուսուլման-ազգեր անվանել, հայ ազգի մոտ, որը երկար ճանապարհ է անցել, այս նախագիծը միանգամից հետաքրքրություն հարուցեց, եւ հայ գիտնականները մեծ պատրաստակամությամբ համաձայնեցին մասնակցել այս նախագծին՝ հին աշխարհի պատմության մեջ իրենց տեղը որոշելու համար:

Հարունակելի...
Վալերի ԱՐԱՋԱՆՅԱՆ

«Ապառաժ» երկչաբաթաթերթ
Ստեփանակերտ, Կուստյան 17,
հեռ.97 38 43, E-mail: aparajtert@gmail.com
Կայքէջ՝ www.aparaj.am

Նյութերի համար պատասխանատու են հեղինակները: Թերթը կարող է տպագրել նաև նյութեր, որոնցում արձարձված տեսակետները չի կիսում:
Տպագրվում է Ստեփանակերտի «ԴԻՉԱԿ ԴԼՅՈՒՄ» ՍՊԸ-ում:
Գրանցման վկայական՝ 04: Տպաքանակը՝ 1000: Պրակտիկական 100 դրամ:

Խմբագիր
Արա Պուլուզյան